Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թվականի
դեկտեմբերի 22-ի N 1839 -Ն որոշման

<<Հավելված N 1
ՀՀ կառավարության 2005թվականի
հուլիսի 21-ի N 1113 -Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կանոնակարգվում եմ Հայաստանի Հանրապետության փոստային կապի բնագավառում փոստային կապի գործունեության լիցենզիա (այսուհետ՝ լիցենզիա) և լիցենզիային կից համապատասխան ներդիր ստանալու համար իրավաբանական և անհատ ձեռնարկետերերին (այսուհետ՝ հայտատու) ներկայացվող պահանջներն ու պայմանները:

2. Հայտատուն փոստային կապի գործունեության իրականացման լիցենզիա ստանալու նպատակով կարող է դիմել ինչպես սույն կարգի 5-րդ կետում նշված բոլոր ոլորտների, այնպես էլ դրանցից յուրաքանչյուրի համար: Լիցենզիան տրամադրելիս՝ լիցենզիայի ներդիրում կատարվում է նշում հայցվող ոլորտի վերաբերյալ: Լիցենզիայի ներդիրը տրամադրվում է լիցենզիայի հետ միաժամանակ:

3. Փոստային կապի գործունեության լիցենզավորման և լիցենզիային կից՝ սույն կարգի 5-րդ կետով սահմանված համապատասխան ոլորտի ներդիրի տրամադրման հարաբերությունները կանոնակարգվում են «Լիցենզավորման մասին», «Փոստային կապի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, սույն կարգով և այլ իրավական ակտերով:

4. Փոստային կապի գործունեության իրականացման լիցենզիան և լիցենզիային կից ներդիրը տրամադրում է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունը (այսուհետ՝ լիցենզավորող մարմին):

5. Լիցենզիայի ներդիրները տրամադրվում են ըստ գործունեության հետևյալ ոլորտների (տեսակի)՝

1) փոստային կապի ծառայությունների գործունեություն.

2) սուրհանդակային կապի ծառայությունների գործունեություն:

6. Փոստային կապի գործունեության լիցենզիա ստացած անձինք կարող են գործունեություն իրականացնել սույն կարգի 5-րդ կետով սահմանված ոլորտներում կամ ոլորտներից որևէ մեկում, եթե լիցենզավորող մարմնի կողմից ստացել են համապատասխան ոլորտի գործունեություն իրականացնող լիցենզիայի ներդիր:

7. Լիցենզիան ստանալու համար օրենքով և սույն կարգով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերը, հայտատուի հայեցողությամբ, կարող են ներկայացվել անձամբ, փոստով կամ էլեկտրոնային համակարգի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 24-ի N 1283-Ն որոշմամբ սահմանված կարգով:

II. ԼԻՑԵՆԶԻԱ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

8. Հայտատուն լիցենզիա և լիցենզիայի ներդիր ստանալու համար լիցենզավորող մարմին է ներկայացնում հետևյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝

1) իրավաբանական անձ հանդիսացող հայտատուները՝

ա. լիցենզիա և լիցենզիայի ներդիր ստանալու մասին հայտ՝ համաձայն N 1 ձևի՝ նշելով իրավաբանական անձի անվանումն ու կազմակերպաիրավական ձևը, պետական գրանցման համարը, գտնվելու և գործունեության իրականացման վայրերը, հեռախոսահամարները, գործունեության ոլորտը (տեսակը), որը հայտատուն մտադիր է իրականացնել,

բ. հայտում նշված գործունեության տեսակի իրականացման համապատասխան կանոնները (փոստային կապի ծառայությունների և (կամ) սուրհանդակային կապի ծառայությունների),

գ. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան պետական տուրքի վճարման անդորրագիրը.

2) անհատ ձեռնարկատեր հանդիսացող հայտատուները՝

ա. լիցենզիա ստանալու մասին հայտ՝ համաձայն N 2 ձևի՝ նշելով անունը, հայրանունը, ազգանունը, անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը, բնակության և գործունեության իրականացման վայրերը, լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը, որը հայտատուն մտադիր է իրականացնել,

բ. անձնագրի պատճենը,

գ. իր կողմից փոստային կապի ծառայությունների գործունեության և (կամ) սուրհանդակային կապի ծառայությունների գործունեության մատուցման (իրականացման) կանոնները,

դ. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան պետական տուրքի վճարման անդորրագիրը:

III. ԼԻՑԵՆԶԻԱ ՏԱԼՈՒ, ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ, ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

9. Լիցենզավորող հանձնաժողովը լիցենզիա տալու մասին հայտը քննարկում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

10. Լիցենզիայի հայտը մերժվում է՝

1) «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում և օրենքով սահմանված կարգով.

2) եթե հայտում նշված և հայտատուի կողմից ներկայացված (փոստային կապի ծառայությունների և (կամ) սուրհանդակային կապի ծառայությունների) տվյալ գործունեության

մատուցման (իրականացման) կանոնները հակասում են Հայաստանի Հանրապետության օրենքներին կամ այլ իրավական ակտերին:

11. Լիցենզավորող մարմնի ղեկավարի կողմից լիցենզիա տալու մասին որոշման ընդունումից հետո լիցենզավորող մարմինը հայտատուին տրամադրում է փոստային կապի գործունեության իրականացման լիցենզիա և լիցենզիայի ներդիր՝ լիցենզիայի հայտին կից ներկայացված՝ սույն կարգի 5-րդ կետով սահմանված ոլորտի մասով: Լիցենզիան և ներդիրը ստորագրվում և կնքվում է լիցենզավորող մարմնի համապատասխան ստորաբաժանման ղեկավարի կողմից: Լիցենզավորված անձն իրավունք ունի գործունեություն իրականացնելու միայն լիցենզիային կից տրամադրված ներդիրում նշված գործունեության ոլորտում (տեսակում):

12. Լիցենզիան վերաձևակերպվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հիմքերով և կարգով:

13. Լիցենզիայի գործողությունը կասեցվում կամ դադարեցվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և <<Փոստային կապի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հիմքերով և կարգով:

IV. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՄ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼԸ

14. Գործունեության ոլորտի (տեսակի) փոփոխության դեպքում լիցենզավորված անձը մինչև այդ փոփոխությունների կատարումը լիցենզավորող մարմին է ներկայացնում լիցենզիային կից տրամադրված ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին հայտ՝ համաձայն N 3 ձևի, տվյալ ներդիրի բնօրինակը և իր կողմից հայցվող գործունեության (փոստային կապի ծառայությունների կամ սուրհանդակային կապի ծառայությունների) իրականացման կանոնները:

15. Փոստային կապի գործունեության իրականացման լիցենզիա ստացած անձինք լիցենզիային կից՝ նախկինում ստացած ներդիրով, տվյալ գործունեության տեսակից բացի,

սույն կարգի 5-րդ կետով սահմանված այլ գործունեության տեսակով իրականացնելու իրավունք ստանալու համար լիցենզավորող մարմին են ներկայացնում համապատասխան գործունեության ոլորտի (տեսակի) լիցենզիայի ներդիր ստանալու մասին հայտ՝ համաձայն N 4 ձևի, և հայտում նշված գործուեության տեսակի իրականացման համապատասխան կանոնները (փոստային կապի ծառայությունների կամ սուրհանդակային կապի ծառայությունների):

16. Լիցենզավորող մարմինը սույն կարգի 14-րդ կամ 15-րդ կետերի համաձայն ստացած հայտը և կից փաստաթղթերն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուին է տրամադրում սույն կարգի 5-րդ կետով սահմանված գործունեություն իրականացնող լիցենզիայի ներդիր, եթե ներկայացված հայտը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմաններին ու պահանջներին:

17. Լիցենզիայի ներդիրի տրամադրման հայտը մերժվում է, եթե հայտատուի կողմից ներկայացված գործունեության (փոստային կապի ծառայությունների կամ սուրհանդակային կապի ծառայությունների) իրականացման կանոնները հակասում են Հայաստանի Հանրապետության օրենքներին կամ այլ իրավական ակտերին:

18. Սույն կարգով սահմանված ներդիրի ստացման մասին հայտը մերժվում է լիցենզավորող մարմնի որոշմամբ:>>:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ձև N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

_____

(հայտատուի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, պետական գրանցման համարը)

_____

(գտնվելու վայրը, հեռախոսահամարը, ֆաքսը)

Հ Ա Յ Տ

Խնդրում եմ տրամադրել փոստային կապի գործունեության լիցենզիա՝ ստորև ներկայացվող ոլորտում () գործունեություն իրականացնելու համար՝

_____

(ոլորտը (), որի () համար տրամադրվելու է () գործունեություն իրականացնելու
լիցենզիայի ներդիր ()

_____

_____

_____

_____

Հայտին կցվում են՝

1) վերոնշյալ ոլորտում գործունեության մատուցման (իրականացման) կանոնները (փոստային կապի ծառայությունների և (կամ) սուրհանդակային կապի ծառայությունների).

2) պետական տուրքի վճարման անդորրագիրը:

ԴԻՄՈՂ _____ _____ _____

(պաշտոնը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ 20 թ.

Ձև N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

_____

(անհատ ձեռնարկատիրոջ անունը, հայրանունը, ազգանունը)

_____

(անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը)

_____

(բնակության և գործունեության իրականացման վայրերը, հեռախոսահամարները)

Հ Ա Յ Տ

Խնդրում եմ տրամադրել փոստային կապի գործունեության լիցենզիա՝ ստորև ներկայացվող ոլորտում () գործունեություն իրականացնելու համար՝

_____

(ոլորտը (), որի () համար տրամադրվելու է () գործունեություն իրականացնելու
լիցենզիայի ներդիր ()

_____

_____

_____

_____

Հայտին կցվում են՝

1) անձնագրի պատճենը.

2) վերոնշյալ ոլորտում գործունեության մատուցման (իրականացման) կանոնները (փոստային կապի ծառայությունների և (կամ) սուրհանդակային կապի ծառայությունների).

3) պետական տուրքի վճարման անդորրագիրը։

ԴԻՄՈՂ _____ _____ _____

(պաշտոնը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ 20 թ.

Ձև N 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

_____

(անհատ ձեռնարկատիրոջ անունը, հայրանունը, ազգանունը, կազմակերպության անվանումը, պետական գրանցման համարը)

_____

(բնակության և գործունեության իրականացման վայրերը, հեռախոսահամարները)

Հ Ա Յ Տ

ԼԻՑԵՆԶԻԱՅԻՆ ԿԻՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՆԵՐԴԻՐԸ ՈՒԺՆ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Խնդրում եմ ուժը կորցրած ճանաչել փոստային կապի գործունեության լիցենզիային կից տրամադրված N _____ ներդիրը:

Հայտին կցվում է ներդիրի բնօրինակը:

ԴԻՄՈՂ _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ 20 թ.

Ձև N4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

_____

(անհատ ձեռնարկատիրոջ անունը, հայրանունը, ազգանունը, կազմակերպության անվանումը)

_____

(բնակության և գործունեության իրականացման վայրերը, հեռախոսահամարները)

Հ Ա Յ Տ

ԼԻՑԵՆԶԻԱՅԻՆ ԿԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՆԵՐԴԻՐԻ ՍՏԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Խնդրում եմ տրամադրել փոստային կապի գործունեության լիցենզիայի ներդիր՝ ստորև ներկայացվող ոլորտում գործունեություն իրականացնելու համար՝

_____

(ոլորտը, որի համար տրամադրվելու է գործունեություն իրականացնելու
լիցենզիայի ներդիր

_____

_____

_____

Հայտին կցվում են վերոնշյալ ոլորտում գործունեության մատուցման (իրակա-նացման) կանոնները (փոստային կապի ծառայությունների և (կամ) սուրհանդակային կապի ծառայությունների) :

ԴԻՄՈՂ _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ 20 թ.

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թվականի
դեկտեմբերի 22-ի N 1839 -Ն որոշման

«Հավելված N 2
ՀՀ կառավարության 2005 թվականի
հուլիսի 21-ի N 1113-Ն որոշման

Ձև

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

_____
(լիցենզիայի համարը)

Տրված է _____
(լիցենզիան տալու օրը, ամիսը, տարեթիվը, իրավաբանական անձի անվանումն

_____
ու գտնվելու վայրը, իսկ անհատ ձեռնարկատիրոջ համար՝ անունը, ազգանունը և բնակության վայրը)

Գործողության ժամկետը՝ անժամկետ:

Լիցենզավորման գործակալության պետ _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)>>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2011 թվականի
դեկտեմբերի 22-ի N 1839 -Ն որոշման

<<Հավելված N 3
ՀՀ կառավարության 2005 թվականի
հուլիսի 21-ի N 1113-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Լ Ի Ց Ե Ն Զ Ի Ա Յ Ի Ն Ե Ր Դ Ի Ր

_____
(լիցենզիայի և ներդիրի համարները)

_____
(կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ անվանումը)

_____
(գործունեության ոլորտը)

_____
(տալու ամսաթիվը)

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ ԱՆԺԱՄԿԵՏ

_____

Լիցենզավորման գործակալության պետ _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ